ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 28

20 հունվարի 2025 թվականի N -Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝

որոշում եմ.

1. հիմք ընդունելով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցների կողմից ոչ պրոֆեսիոնալ բժշկական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ քաղաքացի Հերմինե Հարությունյանի ահազանգը և դրանում արձանագրված փաստարկները՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Արմեն Թադևոսյանին հանձնարարել «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում կատարել ուսումնասիրություն:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Արմեն Թադևոսյանին՝ ուսումնասիրության արդյունքները ներկայացնել քննարկման մինչև 2025 թվականի հունվարի 24-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հունվարի 20
ք. Կապան